



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

**WESTERN PRELACY**

**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԳԼԽԱՒՈՐ ՉԻՊԱՏՈՍԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Ս. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ուրբաթ, 6 Փետրուարին ընդունեց Լոս Անճելըսի մօտ Հայաստանի Նոր գլխաւոր հիւպատոս Ն. Վ. Գրիգոր Յովհաննիսեանի այցելութիւնը: Հանդիպումին ներկայ եղան Կրօնական ժողովի ատենապետն ու փոխ ատենապետը՝ Գերպ. Ս. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան եւ Հոգ. Ս. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, ինչպէս նաեւ Ազգ. Վարչութեան անդամ Տիար Խաչիկ Երեցեան:

Հայրենի դիւանագետը Ազգ. Առաջնորդարան ժամանեց կէսօրէ առաջ ժամը 11ին, ընկերակցութեամբ Տիար Արմէն Լիլոյեանի, որ, ինչպէս ծանօթ է, աւարտած է շրջանիս մէջ գլխաւոր հիւպատոսի իր պաշտօնավարութեան շրջանը եւ շուտով պիտի վերադառնայ հայրենիք:

Փոխադարձ ծանօթացումի պահէն ետք, պաշտօնաւարտ գլխաւոր հիւպատոսը՝ Տիար Ա. Լիլոյեան ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ տուաւ նշանակեալ գլխաւոր հիւպատոսին ասպարեզին մասին, նշելով, որ Լոս Անճելըսի մէջ ընդհանուր հիւղպատոսի կոչումը դիւանագիտական իր անդրանիկ պաշտօնն է, թէեւ ան պաշտօնական ու մտաւորական բազմաթիւ առաքելութիւններ վարած է տարբեր երկիրներու մէջ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց Նոր նշանակեալ գլխաւոր հիւպատոսը, խօսեցաւ Հայաստանի դիւանագիտական ներկայացուցչութեան հետ Ազգ. Առաջնորդարանիս ու անոր հովանիին տակ գործող եկեղեցական, կրթական եւ այլ միաւորներու սերտ գործակցութեան մասին, որոնք կը տարուին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ուղեցոյցով ու Ս. Աթոռին հետ սերտ գործակցութեամբ: Տիար Գ. Յովհաննիսեան, իր կարգին, վեր առնուեցաւ Սփիւռքին սատար կանգնելու Հայաստանի իշխանութիւններուն պատրաստակամութիւնն ու յայտնեց, որ իր առաքելութիւնը պիտի ըլլայ այդ տրամադրութեան մարմնաւորումը:

Առաջնորդ Սրբազանը այս առիթով անգամ մը եւս գնահատանքով արտայայտուեցաւ պաշտօնաւարտ գլխաւոր հիւպատոսին անձնական ու պաշտօնակատարի ազնիւ արժանիքներուն մասին, ու վստահութիւն յայտնեց, որ Նոր գլխաւոր հիւպատոսի պաշտօնավարութեան շրջանը եւս պիտի ըլլայ գործակցութեան աւելի եւս զարգացման շրջան մը: Անոր հարցումներուն պատասխանելով, Առաջնորդ սրբազանը ծանօթութիւններ

տուաւ Ազգ. Առաջնորդարանի ու ընդհանրապէս Թեմի անմիջական ծրագիրներուն մասին:

Հանդիպումի աւարտին, Առաջնորդ Սրբազանը իրենց յառաջիկայ առաքելութեանց մէջ բարի երթ մաղթեց երկու գլխաւոր հիւպատոսներուն:

## **PRELATE WELCOMES NEW CONSUL GENERAL OF ARMENIA**

On the morning of Friday, February 6<sup>th</sup>, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed to the Prelacy the newly appointed Consul General of Armenia in Los Angeles the Honorable Grigor Hovhannisyán.

Mr. Hovhannisyán was accompanied by outgoing Consul General the Honorable Armen Liloyan who will be returning to Armenia as his term has come to an end. Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian, Vice-Chair Very Rev. Fr. Barthev Gulumian, and Executive Council member Mr. Khatchig Yeretzian were also in attendance.

Following the introductions, Mr. Liloyan acquainted the Prelate with Mr. Hovhannisyán's professional background and the various positions he has held in different countries.

The Prelate spoke to the new Consul General about cordial and collaborative relationship between the Consulate General and the Prelacy and familiarized him with the general mission and endeavors of the Prelacy. He once again commended the outgoing Consul General for his service, expressing confidence that the history of collaboration will continue during the new Consul General's term.

At the conclusion of their meeting the Prelate wished both Mr. Hovhannisyán and Mr. Liloyan success in their future endeavors.